ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք.Երևան **27. 02. 2026թ.**
ժամը 11:00

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետի տեղակալ Ռաֆայել Մկրտչյան (հանձնաժողովի նախագահ),

բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՀՈԳՎ մասնագիտական մեթոդական աջակցման վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ Գեորգի Խաչատրյան (գնահատող անդամ),

գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՀՈԳՎ ՄՄԱՎ ընտանեկան բռնության կանխարգելման աշխատանքների գծով մեթոդական բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Հայկ Մկրտչյան (գնահատող անդամ),

դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության համակարգչային ցանցի կառավարման և տեղեկատվական անվտանգության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հովասափյան (բացող անդամ),

ե. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի համակարգչային ցանցի կառավարման և տեղեկատվական անվտանգության բաժնի գլխավոր մասնագետ Հովհաննես Մարտիրոսյան (բացող անդամ),

զ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ասատուր Աբասյանին (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

ՀՀ ՆԳՆ կարիքների համար «**էլեկտրոնային ձեռնաշղթաների**» ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026** ծածկագրով ընթացակարգի /այսուհետ՝ Ընթացակարգ/ բացման նիստը հրավերով սահմանվել էր ՝ 23.02. 2026թ. ժամը 12:00-ին: Սակայն նիստը տեղի չի ունեցել, քանի որ հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո, որն է 23.02. 2026թ. ժամը 12:00-ն Ընթացակարգին կցված պատասխանատուներ (ԳՊ/ԲԱ)՝ հայտերը բացողների էջերում Ընթացակարգը տեսանելի չէր և հնարավոր չէր իրականցնել հայտերի բացում: 23.02.2026թ.-ին ՀՀ ՆԳՆ-ի կողմից թիվ 49/12/48866-26 համարակալմամբ գրություն է ուղարկվել լիազոր մարմին՝ ՀՀ ՖՆ հետևալ բովանդակությամբ.

«*Armeps համակարգի հանրային դաշտում տեսանելի են թվով երեք մասնակիցներ, սակայն ընթացակարգի կցված պատասխանատուներ (ԳՊ/ԲԱ)՝ հայտերը բացողների էջերում տվյալ ընթացակարգը տեսանելի չէ և հնարավոր չէ իրականցնել հայտերի բացում և գնահատում*», և խնդրել միջամտել Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման բնականոն ընթացքը կազմակերպելու նպատակով:

26.02.2026թ.-ին ՀՀ ՖՆ-ի կողմից թիվ 03/26-1/4385-2026 գրությամբ պատասխանվել է, « *որ հայտերի բացման և գնահատման բնականոն ընթացքը համակարգում տեխնիկապես հնարավոր չէ վերականգնել*» և առաջարկել *«գնահատման գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով, քանի որ ընթացակարգի մասնակիցների հայտերի փաթեթները տեսանելի են armeps համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր» բաժնում, ինչպես նաև դրանց ներբեռնման մասին տեղեկատվությունն առկա է համակարգում»:*

1. Օրակարգ.

~~Ելնելով վերոգրյալից, Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը նշանակվել է **27. 02. 2026թ.-ին ժամը 11:00-ին:**~~

ՀՀ ՆԳՆ կարիքների համար «**էլեկտրոնային ձեռնաշղթաների**» ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026** ծածկագրով ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց՝

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել են հետևյալ մասնակից/ներ/ը.

N	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը	Հայտ ներկայացրած մասնակցի հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն
1	**Communication Technologies Kft.**	Հասցե՝ H-1061 Budapest, Anker koz 2-4, Հեռախոս՝ +36 70 623 5776, Էլ. Փոստ: ct@c-technologies.hu
2	**«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ**	Հասցե՝ ՀՀ, ք, Երևան, Աբելյան փող, 6/4 շենք, 204 սենյակ, Հեռախոս՝ +37444777887, Էլ. Փոստ: ardmoreconstruct@gmail.com
3	**«ՖԼԵՔՍԻՄԱ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ**	Հասցե՝ ՀՀ, ք, Երևան, Չարենցի փ., 64 շենք, բն 5, Հեռախոս՝ 093992228, Էլ. Փոստ: fleximasystemllc@gmail.com

3. Տվյալներ՝ հայտ/եր/ը համակարգին համապատասխան կազմված լինելու մասին.

Համակարգը թույլ է տվել Armeps համակարգի հանրային դաշտում տեսանելի թվով երեք մասնակիցների հայտերը ներբեռնել:

4. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026 ծածկագրով ընթացակարգի հրավերի վերաբերյալ եղել է հարցումներ և որոնց վերաբերյալ պարզաբանումները և պատասխանները հրապարակվել են տեղեկագրում:

5. Տեղեկատվություն՝ հրավերում փոփոխություն կատարելու վերաբերյալ.

ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026 ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

6. Տվյալներ՝ հայտերի /ծրարների/ կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

6.1 Հանձնաժողովը արձանագրեց՝

Մասնակիցներից՝ **Communication Technologies Kft.-ի և «ՖԼԵՔՍԻՄԱ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացրած հայտերը կազմված չեն հրավերի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝

Communication Technologies Kft.-ի հայտը ամբողջությամբ, այդ թվում գնային առաջարկը անգլերեն լեզվով է, որը ՀՀ Գնումների օրենսդրությամբ անթույլատրելի է, ինչպես նաև սույն որոշման հետ կապված տեղեկագրի / https://gnumner.minfin.am/ ՝ «ՀԱՃԱԽ ՍՏԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» բաժնի «Պատվիրատուների կողմից տրված հարցեր» ենթաբաժնում հրապարակված պարզաբանումների 24-րդ տողով տողով այն պարզաբանվել է : Ինչպես նաև որպես Հայտի ապահովում ներկայացված անդորրագրում առկա են սխալներ, մասնավորապես՝ Ընթացակարգի ծածկագիրը նշված չէ և որպես Բենեֆիցիար նշված է ՀՀ Արդարադատության նախարարություն:

«ՖԼԵՔՍԻՄԱ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի հայտի ապահովման ֆայլը ներբեռնվել է այն բացվում է, սակայն դատարկ է:

Իսկ «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ-ի հայտը ամբողջությամբ համապատասխանում է հրավերի պահանջներին:

6.2 Հանձնաժողովը որոշեց՝

«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել **բավարար,**

Communication Technologies Kft.-ի և «ՖԼԵՔՍԻՄԱ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի հայտերը **մերժել, ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, այն է՝** ***«4) Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:»***

7. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գները.

Չափաբաժնի համար	Cpv	Անվանում	Քանակ
1	35231100/501	Ձեռնաշղթաներ /էլեկտրոնային/	120 հատ

Գնառաջարկներ

Չափաբաժնի համար	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	336 000 000	253 890 000	50 778 000	304 668 000	
1	Communication Technologies Kft.	336 000 000	73 529 722	14 705 944	88 235 666	Մերժված
1	«ՖԼԵՔՍԻՄԱ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	336 000 000	274 166 000	54 833 200	329 000 000	Մերժված

8. Տեղեկություններ ընթացակարգի ընթացքի մասին, Հանձնաժողովը որոշեց.

8.1. ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ **«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ –ին:**

8.2. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 10-րդ օրացուցային օրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում **«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ –ի** հետ կկնքվի **«էլեկտրոնային ձեռնաշղթաների»** ձեռքբերման գնման պայմանագիր:

9. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026 ծածկագրով գնման ընթացակարգը համարվում է **կայացած**:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026 ծածկագրով հրատապ բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի

N	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ		ՄԱՍՆԱԿՑԻ/ՆԵՐԻ/ ԱՆՎԱՆՈՒՄԸ		
			«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	Communication Technologies Kft.	«ՖԼԵՔՍԻՄԱ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ
1	Հրատապ բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին	Համապատասխանում է	√	√	√
		Չի համապատասխանում			
2	Հրատապ բաց մրցույթի գնման ձևով գնում կատարելու ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին	Համապատասխանում է	√		
		Չի համապատասխանում		√	√
3	Գնային առաջարկը	Համապատասխանում է	√		√
		Չի համապատասխանում		√	

Համապատասխանության կամ անհամապատասխանության դեպքում դրվում է « √ » նշանը:

10. Ընդունվեց որոշում՝ կողմ 5 դեմ 0 :

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝

ՆԱԽԱԳԱՀ՝

Ռաֆայել Մկրտչյան

ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գեորգի Խաչատրյան

Հայկ Մկրտչյան

ՀԱՅՏԸ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գագիկ Հովասափյան

Հովհաննես Մարտիրոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ասատուր Աբասյան